ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 1806-Լ	2025 թվականի դեկտեմբերի 30-ի N 110-Լ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 102.2-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 410-Ն որոշման 3-րդ կետը,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշման 17-րդ կետի 16-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Սահմանել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի տվյալներին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը հասանելիություն տրամադրելու ընթացակարգային կարգավորումները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 1800-Լ և

Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
2025 թվականի դեկտեմբերի 30-ի
N 110-Լ համատեղ հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ և ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Սույն ընթացակարգային կարգավորումներով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կառավարվող՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի (այսուհետ՝ թվային համակարգ) տվյալներին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը (այսուհետ՝ ծառայություն) հասանելիություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N410-Ն որոշմանը համապատասխան՝ ծառայությանը տրամադրվում է հասանելիություն գործատուների կողմից օտարերկրյա քաղաքացիների հետ թվային համակարգի միջոցով կնքված աշխատանքային պայմանագրերին, աշխատանքային պայմանագրում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին համաձայնագրերին, ինչպես նաև օտարերկրյա աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտերին:

3. Թվային համակարգի՝ օտարերկրյա աշխատողի տվյալներին ծառայությանը հասանելիություն տրվում է այն ծավալով, որն անհրաժեշտ է օտարերկրյա աշխատողի ներգրավման https://workpermit.am միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված դիմումների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքն ապահովելու համար:

4. Ծառայությանը՝ թվային համակարգի տվյալներին հասանելիությունը տրամադրվում է հարցումների հիման վրա՝ վեբ ծառայության (API) ձևաչափով՝ ինքնաշխատ եղանակով: